Հուսիկ Արա

Գեղեցկություն

Գեղեցկությունը կփրկի աշխարհը:
Դոստոևսկի
Ինձ չփրկեցիր, գեղեցկություն,
հպարտ անցար լույսիս կողքով
և տեսնել չուզեցիր,
թե ինչ կա սրտիս մեջ:
Իմ սերն էիր ու համոզմունքը,
քեզ հասնելու համար աշխարհ եկա.
քո հրաշքը ինձ ամոքելն էր,
ու թերացար:
Մանրամասն տրվեցի ու անմնացորդ,
որ կարող է տալ մարդը աշխարհում,
երբ հանդիպել է քեզ:
Ինձնից ոչինչ չպահեցի ինձ,
քո սպասավորը եղա ու երկրպագուն,
բացձեռ շռայլեցի քեզ և ինձնից թաքուն:
Չնկատեցիր ինձ,
որքան էլ ուղիղ աչքերիդ մեջ նայեցի,
շրջանցեցիր ու եզրով անցար.
օտար եղա քեզ
ու քո անտարբերը մնացի:
Ծնորհակալ եմ սակայն, որ տեսա քեզ,
ճանաչեցի հայացքդ ու լեզուդ հասկացա,

որ կյանք դարձար, մի ակնթարթ թեկուզ,
ամեն անգամ ինձ տրվող իմ մահվան դեմ:
Նրա անողոք ձեռքերն էիր,
գեղեցկություն,
որ ինչպես տվեց, այնպես էլ վերցրեց ինձնից,
ու դատարկ է աշխարհը.
ինձ չփրկեցիր, իմ աղջիկ,
երբ կյանքս դո՛ւ էիր ամբողջովին: